

տէն, եւ մասամբ ալ հինցած եւ ընդօրինակողներէ սխալաշատ ըլլալնուն համար է...» (35)

Սակայն, Հայոց այս կրօնական ընկրկումը Հոռի եկեղեցիին հանդէպ պարզապէս առեւտրական մտադրութեամբ եղած է: Հայերը տէր էին Պարսկաստանի բոլոր մետաքսի առեւտուրին, եւ Եւրոպական շուկաներուն մէջ պաշտպանութիւն գտնելու պահանջէն մղեալ, մանաւանդ որ Հայոց Հոռի եկեղեցւոյն դաւանաւորս ըլլալու ցոյց տուած յամառ ընդդիմութիւնը եւ երբեմն իրապէս այսպանելի հակադարձակումները կաթողիկէ կղերին մէջ դադարաւոր ծնած էին, թէ մի գուցէ հաւատաւորութիւնը աւելի հեշտին կ'ըլլար, եթէ Հոռոմ իր ազդեցութիւնը բանեցնէր ընդդէմ Եւրոպա գտնուած հայ վաճառականներուն:

Ես հոս այս մասին ծանրանալ աւելորդ կը սեպեմ՝ նիւթէս չչեղելու համար:

Պատմութեան այս թելը չկտրելու համար հոս կը ներկայացնեմ Հոռի նամակ-պատասխանին պատճէնը 1633 յունուար 5 թուականաւ, «ուղղուած Խօջայ Նազարին, որ հետեւեալն է».

«Առ Տիար Խօջայ Նազար Հայ կառավարիչ Ջուղայի. (Prop. Lettre Volgari, an, 1663, Vol. 13, F. 3):

«Հ. Յովհ. Թաղէոս Բոկոտն Կարմեղեան տեղեկացուց Նորին Սրբութեան եւ այս Տ. Հ. Ս. Ժողովին այն օգնութիւններն եւ շնորհքները, զոր նա գտած է Ձեզմէ. եւ այն ամէնը զոր դուք ըրած էք եւ կ'ընէք մեր լատին կրօնաւորներուն որոնք այդ կողմերը կը գտնուին, եւ ի մասնաւորի Բոկոտն Կարմեղեաններուն»:

«Յիշեալ Հօր այդ կողմերը դարձին առթիւ կը յայտնէ (Նորին Սրբութիւնը) իւր չընորհակալութիւնը Ձեզ եւ կը խնդրէ միանգամայն որ չարունակէք նոյն հանդէպ անոնց,

որպէսզի Ձեր հօր պաշտպանութեան տակ կարենան ապրիլ խաղաղութեամբ այդ պետութեան մէջ եւ կատարել իրենց ծառայութիւնն Աստուծոյ եւ Ս. Եկեղեցւոյ, որուն համար զրկուած են այդ կողմերը»:

«Բայ աստի Նորին Սրբութիւնը ձեռնադրած է յիշեալ Հ. Յովհաննէսը եպիսկոպոս, եւ որովհետեւ յառաջացեալ տարիքի մէջ կը գտնուի, այս պատճառաւ ալ տուաւ անոր ուրիշ եպիսկոպոս մը յառընթերակայութիւն: Ս. Ժողովը կը խնդրէ Ձեր Տէրութենէն որ ընդունիք զանոնք որպէս յանձնարարեալք եւ անոնց բոլոր պէտքերու եւ կարօտութեանց մէջ օգնէք եւ պաշտպանէք զանոնք ըստ Ձեր կարողութեան: Ձեր այս սիրալիք վերաբերմունքը հանդէպ անոնց մեծապէս հաճելի պիտի ըլլայ Նորին Սրբութեան»:

«Նկատմամբ այն խնդրոց, զորոնք յիշեալ Հ. Յովհաննէս հայ վաճառականներու կողմէն դրաւ մեր առջեւ, նոյն Հայրը անձամբ պիտի հաղորդէ Ձեզ կարեւորները»:

«Կը մնայ այժմ, որ դուք եւ Ջուղայի հայ վաճառականները այս քաղաքի (Հոռի) մէջ Ձեր Ազգին համար բացուելիք Դպրանոցի ի նպաստ ընէք այն, ինչ որ Ձեզ կ'իյնայ: Ես կը վստահացնեմ Ձեզ եւ հայ վաճառականներուն, որ այս պիտի ըլլայ ի մեծ ծառայութիւն Աստուծոյ եւ ի փառս եւ յօգուտ համօրէն հայ Ազգին» (36)

Մենք ուրիշ ատեն պիտի տեսնանք, որ այս զիջումները եւ բանակցութիւնները արդիւնք մը չտուին, մանաւանդ որ Յրա Յովհ. Դատտէուսի մահը (որ այժմ եպիսկոպոս եղած էր) ամէն բան մոռացութեան մատնեց: